ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «24» հունիսի 2024թ.

ժամը 15:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

<u>ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին</u>

Մ.Մովսիսյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Auction էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 2 /երկու/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	Կարեն Եղոյան Հենրիկի Ա/Ձ	Ք. Գավառ, Ոսկանյան փողոց 2/18 Karen.yeghoyan@incloud.com
2	«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ	Ք. Երևան, Մոլդովական 50/4 Footmafor@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտը ըստ չափաբաժինների՝

- Կարեն Եղոյան Հենրիկի Ա/Ձ-ն հայտ է ներկայացրել 1-ին չափաբաժնի մասով,
- «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1,2 չափաբաժինների մասով,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

3.1) Կարեն Եղոյան Հենրիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Հայտով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում սխալ է լրացված «ֆիրմային անվանումը», «ապրանքնային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը» սյունակները:

3.2) «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին /1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է նախահաշվային արժեքը գերազանցող գներ, ներկայացված հայտի հավելված 1-ում /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն/ բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, հայտում բացակայում է նաև հրավերի հավելված 1.3-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև//:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի 534-Ն որոշման 19-րդ կետի 1-ին մասի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել՝**

- «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը՝ 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2024 թվականի հունիսի 11-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ Կարեն Եղոյան Հենրիկի Ա/Ձ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 26/06/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և Auction էլեկտրոնային համակարգի միջոցով ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

7) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի հունիսի 27-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲՈՇՅԱՆ
		Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ